

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆր. 5
Վեցամս. " 2 1/2

Արտասահման
Տարեկան ֆր. 7
Վեցամս. " 4

ԱՇԽԱՐՀ

Համակ և դրամ
զրկել խմբագրու-
թեան հասցէին:

Rédaction
du journal
„Achekhar,“
Varna

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

10 ՍԱՆԴԻՄ

ԳՐԱԿԱՆ . ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

10 ՍԱՆԴԻՄ

ՀԱՅ ՎԱՍԻՃԱՐԱՆՆԵՐԸ ՊՈՒՎԱՐԻՈՅ ՄԷՋ

—(—

Բ.

Անհատներու քաղաքային իրաւունքները ճշգրտորոշ օրէնքը, որ քուէարկուած էր Պուլկար Ազգ. ժողովի անցեալ տարուան նիստաշրջանին մէջ, նկատի պիտի առնէ մեր մատնանիշ ըրած փոքրաթիւ, Պուլկարահայ դասակարգը, քանի որ ան շատ լաւ կրնայ հասկնալ անոնց անհրաժեշտութիւնը արդի կեանքին մէջ, ըմբռնելով դանոնք իբր ուրոյն պահանջներ՝ և ատ երկու տեսակէտով, — ազգային և քաղաքացիական. Ազգային իբր միակ գրգռատեսաւ Չուլումը անկարելի դարձնող, քաղաքացիական իբր միեւնոյն երկրի զաւակը, համարձակ իրաւունքներով անհատական գոյութեան պահանջներ: Եւ, Պուլկարիան իբր ազատ քաղաքացի, համանման իրաւունքներ վայելող անհատ միայն այն մարդը կը ճանչնայ, որ ժիւնկազի մէջ աւերոյց չընթացիր արարած ըրաւորով հասունութեան վկայական մը (baccalauréat) ունի իր մեռիք: Հետեւաբար, մենք, հայերս, որպէս զի ձեռք ձգենք Պուլկարահայ ազատ քաղաքացիի իրաւունքներ, պատինք հետեւի Պուլկար ժիմնազներու պահանջուած պայմանները ստանալու համար: Եւ սակայն, հոս է ահաւասիկ ոչ ազգայնութեան խնդիրը երեւան կողմէ իբր բովանդակ լրջութեամբ: Ի՞նչ կըլլան մեր ազգքը, անոնք որ ապագայ առանձնական հայ մարդիկը պիտի ըլլան, կրթուած ոչ ազգայնական ոգւով: Առանձնահայերէ, Բոլոնահայերէ ի՞նչ տարբերութիւն կրնան ունենալ ան առեւն:

Ահաւասիկ երկու հայեացակէտներու հակոտնեայ գրութիւնը, որոնց սակայն՝ երկուքին ալ, անհրաժեշտօրէն, ոչ մին պակաս, քան զմիւսն, պէտք ունինք: Անենալ մեր ուրոյն ժիմնազները և այդպէս լուծել խնդիրը՝ կարելի չէ, վասն զի երբ արդէն ամբողջ Պուլկարիոյ մէջ չենք հաշուուր աւելի քան 20,000 հայ, անոնց մէկ տաս-

ներորդը՝ որոշ կեդրոնի մը մէջ խակ, անկարող յայտ կու գայ՝ երրորդական վարժարան մը անգամ պահելու: Ասիկա խնդրին է՛ն դրական և ապահովիչ կողմն է: Միակ բաւարար լուծումը կարելի պիտի ըլլայ ուրեմն ան առեւն, որ մեր վարժարանները պիտի կրնան պատրաստել, իրենց տարիքին համապատասխան դաստիարակութեամբ մը, հայ ազգքներ, ոչոնք բաւական տեղեակ ըլլալէ յետոյ իրենց լեւոյն, Հայոց պատմութեան — էն կարեւոր ազգայինները ազգային ինքնուրունութեան պահպանումին — ալ լայն խմբով մը մտնային Պուլկար ժիմնազներ, առանց ո և է վախ ունենալու որպէս կրթութեան յաջորդական ազգեցութենէն, և դուրս գային քաղաքացիական իրաւունքներ ձեռք ձգելու ընդունակ անհատներ Հայերուս համար, բայց արձակուրդէն աւելորդ է չեչտել կարեւորութիւնը քաղաքացիական իրաւունքներու: անոնց պահասը օրէ օր աւելի ըզգալի կըլլայ արդէն: 25,000 ժողովուրդ մը, իր ներկայացուցիչը չունի զեռ Պուլկար Ազգ. ժողովին մէջ: Հոն ծրագիրներ կառավարելու հայ վարժարանները միացներու Պուլկարականներու հետ, և այդ սկզբունքին դէմ կուտը մը չըլլոր: Ինչո՞ւ չօգտուինք երկրին տուած առանձնաշնորհումներն: Շատ ցաւալի է որ, մենք, Պուլկարահայերս, շատ անփոյթ վերաբերուած ենք դէպի մեր գոյութեան հարցը, և հրէայի տենդով մը մշայն առանց հասկնալ ուղիւ առողջ պայմանները մեր գոյութեան պահպանումին, տուած ենք մեզի միայն դրամին:

Աւրեմն առաջին հարցը, որ կը ներկայանայ մեզի, սա է. «Ի՞նչ ծրագրով պէտք է վարենք մեր վարժարանները?»

ԹՈՐԳՈՐ — ՇԱՀՆՈՒՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնս պատիւ ունի յայտարարել թէ Աշխարհի Գ. Թիւին մէջ, մեր տաղանգաւոր ազգակիցներէն Պ. Ս. Սպառհ — Գիւլեան նախաջօղուած մը պիտի ունենայ:

ԳՐՈՂ ԹԷ ԳՐԱԳԷՏ



Բիրակնի վերջնութիւն թիւին մէջ, Պ. Կարօ Վաղ-
ռասն գրագէտները խորագրով ուսումնասիրութեան մը
մէջ, գրողներու ալպօմը ներկայացուցած ատեն, ակնն-
քէ շփոթումներ ըրած է գրողի, գրագէտի և բանաս-
տէրի միջև:

Եթէ գրագէտ ըսելով պիտի ըմբռնենք այն հզօր
հոգիները, որոնք ցեղը կը թարգմանեն, կը ներգոր-
ծեն անոր վրայ, կը շինեն զայն, որոնք ինքնատիպ ու-
ժեղ արտայայտութիւնները կըլլան անոր խառնուածքին,
եթէ գրագէտ ըսելով պիտի ըմբռնենք անոնք որ, մի-
ջավայրին պահանջներուն հաւատարիմ արտայայտիչը
կըլլան նոր գրականութիւն մը, նոր դպրոց մը հիմնե-
լով, կը կարծեմ թէ՛ այնչափ մեծ ըլլալու չէ ալպօմը,
ուր Պ. Կարօ, բանաստեղծ նկարիչի մը երանգապնակով
կ'ուրուագծէ երկասարգ դէմքերը, այնչափ տարբեր
սակայն իրարմէ, խառնուածքով ու գրականութեամբ:

Եթէ լրջօրէն ուսումնասիրենք բոլոր դէմքերը,
որոնք երևցան ու անցան Պոլսական գրականութեան
վերածնութեան թուականէն, պիտի նկատենք որ ա-
նոնցմէ շատերը, պարզ գրողներ եղած են և ոմանք ալ
սիրուն, փափուկ բանաստեղծներ:

Օտեան, Ռուսիան, որոնք խոշոր դէմքերն են
մեր նոր գրականութեան վերածնութեան շրջանին, ի-
րապէս գրագէտներ եղան, նոր շունչ մը, նոր ոգի մը
ազդելով ցեղին, զանիկա հաղորդ ընելով մեծ զգացում-
ներուն, զոր ծնած էր այդ թուականին ժողովրդական
Ֆրանսան: Ո՛չ նուազ մեծ գրագէտ մը, Ծերենց, որ
իր վէպերուն մէջ, հայ կեանքէ բաղուած, ժողովրդական
մարդերուն կարեւորութիւնը ցոլացուց, որ նոյնչափ գը-
րագէտ եղաւ, որչափ և բանաստեղծ՝ իր վէպերուն քնն-
քննող հիւսուածքովը, իր պայծառ երեւակայութեամբը,
որ տեղ տեղ շատ խորունկ՝ ենթական Յօք մը, Դաւիթ
մը, Եզնիկ մը զգացուց:

Բանաստեղծ մը՝ Թովմաս Թերզեանը՝ որ արևել-
եան հմայքով լեցուն երգեր թրթուացուց, շուշան տո-
ղեր, որոնք սակայն ցուրտ հրապոյր մը միայն ունին
այսօր: Եկեղեցական բանաստեղծ մըն ալ՝ Նարպէյը,
որ ներդաշնակ, փափուկ լար մը գողացուց, որ՝ մութ
և ինքնաշարժար կեանքի մը խորէն, արշալուսային ճա-
ռադայթներու պէս քանի մը վարդ ներշնչումներ բըղ-
խեցուց: Պէշիքթաշեան գրագէտ բանաստեղծ մը, յա-
ւերժական երգիչը իր սիրովառ հոգիին, տառապանքի
նուազուն ողբերգ մը հեծկտաց: Եւ է՛ն կոյսը բանաս-
տեղծներուն, է՛ն գերազանցը, է՛ն տարաբախդը,
Դուրեան, որ արիւնի ու շանթի, բորբոքման ու բո-
ղոքի բերթուած մը պայթեցուց: Տէմիրճիպաշեան, ցա-
ւագին իմաստասիրութեան մը հիւանդ զաւակը, որ հա-

կապակից ներշնչումներուն, սակայն մնալով միշտ նոյն
խորհրդաւոր գրագէտը, միշտ նոյն վհուկը՝ գերեզմա-
նին ու մահուան, որ մեզ կը փորձէ: Անոր ուսման թիր
մը Պէրպէրեան՝ իր բանալուսիկ բանաստեղծի բովան-
դակ խեղճութեամբն և իր անճարակ ընկերաբանի պատ-
ուելիական արտագրութիւններովը: Չերազ, որ նախ ե-
րևան եկաւ իբրև կուռող ուժ մը, իբրև առաջդիմա-
սէր ոգի մը, և որ յետոյ, վախկոտ հաւի մը պէս
սմբեցաւ ու սքլեցաւ: Արփիարեան, որ՝ սահմանափակ
միտքով, անճարակ հրապարակագրէ մը շա՛տ աւելի
սրտաուռ զւրոյ մըն է: Զօհրապ, որ անկանոն, տարօ-
րինակ միտք մըն է, ինքնատիպ, համով գրող մը՝ եւ է՛ն
սիրուն նուշխիլաղներէն մին: Սիպիլ, որ տեսականացած
գեղեցիկութեամբ դէմք մըն է իր շղարշային շրջանակին
մէջ: Զօպանեան, տաղանդաւոր արուեստագէտ մը որ՝
արևմտեան հայերէնը տարօրինակապէս ճկեց Փրանսական
բնայանկար գրականութեան դարձարձիկ սիրունութիւն-
ներուն մէջ: Հրանդ, որ շափաղանց զգացուած, տաք
տաք տեսարաններ ներկայացուց գաւառէն ու խանէն:
Յետոյ հետզհետէ կուգան Թլկատիցին, տարօրինակապէս
ճոխ, գունազեղ գրագէտ մը, որ ամբողջ գաւառի
գրականութիւն մը շինած է: Կարօ Նթիլիսք բանաս-
տեղծ մը, ուղղակի Փրանսական Քանդեզիսք գրակա-
նութեանն ազգուած. կենսաթրթիւն էջեր բերաւ գա-
ւառի, անոր ծաղիկներովը խնկաբոյր և լուսաւոր՝ անոր
արեւովը: Պարոնեանէն յետոյ, զոր մոռցայ յիշելու,
եւ որ մեր էն մեծ զաւեշտագիրն է, Արփիարը, որ տա-
րօրինակ սրամտութեամբ գրող մը եղաւ, բնայբի մարդ
մը, որ թեթեւ ժպիտ մը պիտի ձգէ իր անունին բով:

Մեկիկ ձգելով անոնք որ հիմայ չեմ յիշեր, ա-
սոնք եղան սակայն գրողները, գրագէտներն ու բանաս-
տեղծները մինչև 1895: Իսկ անոնք որ հիմայ հրապա-
րակը կը լեցնեն, վաղուան գրագէտները ըլլալու ա-
կնկալութիւնը տալէ հետու են: Պ. Կարօի յիշածներէն
ոմանք, ինչպէս Գազանճեան, Խ Դաշկոնց բանաստե-
րներ են, իսկ Երուստի արգէն իր տարրին մէջ չէ և
բան մըն ալ ըլլալիք չունի: Շամսանճեան թերևս վա-
ղուան գիտուններէն մէկը ըլլայ: Շաքարն ու Գեղամը,
սահմանուած ըլլալով հանդերձ վաղուան գրագէտները
ըլլալու, ափսոս որ չապրեցան: Որբերեան իր կեղծա-
ւոր տրամութեանը մէջ առանց հեռք մը ձգելու պիտի
խանծի: Եւ այսչափ:

Վաղուան գրագէտ չունինք ինչպէս կերևայ: Պ.
Կարօին պէս մարդ լաւատես ըլլալու է, որպէս զի չը
տեսնայ բոլոր այն ճղճիմները, որոնք բան մը ըլլալ
չեն խոստանար, և որ կը նետուին հրապարակ տիրող
գրական ամլութենէն օգտուելով:

Երկրորդ յօդուածով մը Ռուսահայ քանի մը գը-
րական դէմքերու վրայ պիտի ծանրանանք:



ՏՂՈՒ ՀՈԳԻՆԵՐ



ԱՏՈՆԻ ԱՐԾԱԹ ՊԻՊԻՇ ՁԵՆ

Ծովեզերեայ հիւղակին մէջ մենաւոր
Երեք դէմքեր ջրածգական, ցաւագին,
Սպասուեմով մ'անյոյս, մթին, տրտում, խոր
Երեք դէմքեր կ'երերտկան ժարդկային:

Փիտագանգուր ձկնորս մըն է անոնց մին,
Ծովին ժարդը՝ որ հովերէն ոռնական
Ընդվզումին, խիզախումին խենդ ոգին
Որ հովերէն ներշնչեր է մոլեկան:

Հուսա՛ դէմք մը կնոջական նո՛ւրբ, տժգոյն,
Հրապոյր մը՝ որ տրտութեամբ կը գեղնի,
Հիւանդ շուշան, շնորհալի, մտածուն
Ստուերին մէջ՝ ցրուուն լոյս մը ծիրանի...

Եւ անկիւնը՝ խարտեաշ տղեկ մը ծաղիկ,
Որ ապուշի նայուածքներով կը նայի,
Ցուրտ պատկեր մը, անխօս, տրտում, գեղեցիկ
Կեանքը սառած՝ այդ աչքերուն մէջ ծաւի:

Լռութիւնը՝ մահաշշուկ, կապարեայ
Որ կը տիրէ այդ հիւղակին մէջ հիմայ...

”””

Դուրսը վճիտ գիշեր մըն է ոսկեվառ,
Բեհեզ երկինք, ուր լուսնական կը փայլի,
Լանջքը ծովին՝ որ կը փողփողի գոհար,
Սնդիկ կայծեր ջուրերուն մէջ լուսալի:


Պղտիկ խարտեաշ հրեշտակը ծաղկատի
Շարժում մ'ըրաւ խռովական, ջրածիգ
— “Հայրի՛կ, ըսաւ, անօթի եմ, անօթի...”
Եւ պատկեր մը՝ նորէն՝ տրտում, գեղեցիկ...

— “Աղւո՛ր տղաս, պիպիշ չունիմ, ի՞նչ ընեմ,
Վա՛ն զաւակս, պիպիշ չունիմ ի՞նչ ընեմ...”

Պղտիկ խարտեաշ հրեշտակը միամիտ
Խեղճ նայուածքը ծովին դարձուց որ լոյսէն
Կը փափղէր արծաթագօծ ու վճիտ,
Եւ ցոյց տալով. “Ատոնք արծաթ պիպիշ չե՞ն...”

ԱՐՄԷՆ ԱՐՄԵՆԱԿ

4. Պոլիս 4 Յունիս



ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ



Խցիկին դուռը բացուեցաւ: Սեւազգեստ մարդ-

անխուով մթութենէն, ու յետոյ իր ձայնը՝ թաւ,
տխրահունչ՝ որ պատերը դողացուց

— Աղջիկ, պատրաստուէ՛:

Ջղային շարժումով մը, անկիւնէն՝ սիրուէդ
մը ցցուեցաւ, երկու բիւբեր կածկլտացին և ջինջ
ձայն մը հարցուց

— Ո՛վ ես դուն.

— Ես, ըսաւ, նորեկ մարդը, կրօնի պաշ-
տօնեայ մըն եմ, արդարութիւնը վքեղ կախա-
զանի դատապարտած է, եկած եմ վերջին հոգե-
խոհանքդ սաղմոսով մը օրօրել:

— Օհ, ըսաւ աղջիկը ան ստեն, դուք չէ՞ք
գիտեր որ կրօնքը և ես իրարու հակօնեայ ենք,
թէ՛ կրօնքը իմ դերս չէ հասկցած, չը հասկնար,
և թէ՛ իմ վերջին մտածումներս, այնքա՛ն սիրե-
լի ինձի համար, պէտք չէ որ սաղմոսով լլրճուին:

— Աղջիկս, ըսաւ քահանան մեղմութեամբ,
աղջիկս, չափէ՛ խօսքերդ:

— Տէ՛ր հայր, հարցուց դատապարտուածը,
զիս արդա՛ր թէ մեղաւոր կը գտնաք:

— Մեղաւո՛ր, բնական է, արդարութեան
դէմ՝ ընդվզած ըլլալուդ համար:

— Մեղաւո՛ր, վասն զի բողոքի ձայն մը բար-
ձրացուցի, վասն զի արիւնացայտ շանթը եղայ՝
վերաւոր մարդկութեան սիրտէն թռած, վասն զի
արցունքները անբնական կը գտնայի, երբ ժը-
պիտները կը շահագործուէին, վասն զի քաղցած-
ներուն հաց տալէ աւելի, ծարաւներուն ջուր
տալէ աւելի, մերկերուն հագուստ տալէ աւելի
բան մը կուզէի ընել: Մեղաւո՛ր... այո՛, կրօն-
քի տեսիլէտէն...

— Աղջիկս, աղջիկս...

— Եւ ձեր դերը՝ տէ՛ր հայր, որ համակեր-
պութիւն քարոզել է խեղճերուն, աղքատներուն,
անժառանգներուն, ձեր դերը՝ որ թագաւոր օ-
ծելու, որ մարդկային տգիտութիւնը շահագոր-
ծելու, որ օգին մէջ արքայութիւն շինելու մէջ
կը կայանայ, ձեր դերը՝ որ սաղմոս կարդալ է
անոնց վրայ, որոնք զրկուածներուն, խոնարհնե-
րուն դատին կը զոհուին, ձեր դերը՝ բացարձա-
կապէս կատեմ:

— Աղջիկ, մտորեալ գառնուկն ես դուն Յի-
սուսին, օգնութեան կանչէ՛ Ս. Մարիամը, սիրտիդ
գեւերը հալածական ընելու համար...

Դուրսը աղմուկները շատցան: Համազգեստով
մարդ մը դուռը հրեց խցիկին, և մութին մէջ,
որ թանձր չէր հիմայ այնչափ, նշան ըրաւ քա-
հանային, որպէս զի ալ ելլայ: Սաղմոսը ձեռքին
մէջ՝ սեւազգեստ մարդը ամօթահար սահմուկեցաւ
դուռնէն դուրս, խղճի պղտիկ աղդարարութիւն
մը զգացողի վրդովմունքով:

գիշերային տուամը կը պատրաստէին: Իմաց տուին աղջկանը որ մահուան պատրաստուի . . .

””

Արշալոյսը մօտ է բացուելու: Անօր մթութիւն մը ամենուրեք. ամառնային երկինքին մէջ, քանի մը աստղեր՝ որ հոգեվարք են:

Հրոպարա՛ ին վրայ կախաղանը. հօն վարը՝ թարմ աղջիկը կապկպուած, և բոլորտիքը՝ հետաքրքիր մարդկութիւն մը գռեհիկ, ապուշ, անտարբեր: Մահաշշուկ լուսութիւն մը կը բարախէ այդ ամբոխին վերև, նայուածքներուն մէջ, որ գէպի կախաղանը կերկննան, մութը ծակելու, ցաւազին ջլաձգութեամբ մը հետաքրքրութիւնը պատկերացած:

Տուամը սլօտի սկսի: Դալկահար աղջիկը հիմայ աւելի գեղեցիկ է, իր խրոխտ սպասումին, իր վսեմ արհամարանքին մէջ: Մազերը՝ մետաքսային գեղեցկութեամբ կը փուռին ուսերն ի վար նայուածքէն շնորհալի հմայք մը կը կաթկթէ, յոնքերը ապն լական քնքշութիւն մը ունին բուրբ այդ ծիրախան տեղունութեան մէջ:

Գահանան մուտուք մը կերկնցնէ՝ մէկէն ի մէկ թաւ ձայն մը, անյուզում, աներևէջ, մահաբոյր՝ որ կը թաւալի: «Ամէ՛ն», կը փոխայ չորս կողմէն ամբոխը. — Ամէ՛ն, ամէ՛ն, օրհնուած ըլլայ Աստուած . . .

Յետոյ բիրտ ձեռքեր՝ ոչ զանիկա կախաղան կը բարձրացնեն:

Բառ մը, բառ մը կախաղանին վրայ և ահա ամէն բան լմնցաւ:

— Կեցցէ՛՛ միջազգայնութիւն . . .

Արշալոյսը՝ բովանդակ կեանք, բովանդակ վարդ, բովանդակ քրքում, նկարուեցաւ հորիզոնը: Անոր շառագոյն, կենսաբաբախ ցուքերը համբուրեցին դալկահար կոյսը հետոս, որ Արշալոյսին համար մեռաւ . . . :

Խ. Թ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սպանո—Ամերիկեան՝ պատերազմին առթիւ, Ֆրանսայի դեսպանը, Պ. Մաք Բինլիի յանձնած է Ամերիկայի առաջարկած հաշտութեան պայմաններուն պատասխանը: Լուր կայ թէ՛ Սպանիա Միացեալ—Նահանգներուն առաջարկները դժբաւորապէս ընդունել է:

Էմիլ Զօլայի կողմէ «Բըթի Ժուռնալ»ի գէմ

բացուած դատը տեղի ունեցաւ մօտ օրերս: Դատարանը սա վճիռը արձակած է:

«Պ. Մառինոնի և Պ. Լաստո, առաջինը տընօրէն «Բըթի Ժուռնալ»ի, և երկրորդը պատասխանատու՝ դատապարտուած են 500 ֆրանք տուգանքի: Պ. Ժիւտէ, խմբագրապետ «Բըթի Ժուռնալ»ի, հեղինակ Զօլան անուանարկող յօդուածներու, դատապարտուած է 2000 ֆրանք տուգանքի: Դատապարտուածներուն ամէն մէկը պէտք է 5000 ֆրանք վճարէ Պ. Զօլայի, իբրև վնասի հատուցում: Այս վճիռը պէտք է հրատարակուի 10 թերթերու մէջ:

«Լա բըթիթ մէքիպլիք» խօսելով Ռուսկառավարութեան հայերուն հանդէպ բռնած մոլեռանդ ընթացքին վրայ, կաւելցնէ թէ՛ հայ դպրոցները փակելէ յետոյ, այսօր ալ, անուանապէս ազգային վարժարաններուն շարժուն և անշարժ կալուածները դրաւելու որոշումը տուած է: Եւ դիւրացնելու համար հայ տարրին ուսերու հետ ձուլումը, կըսէ միեւնոյն թերթը, Զարին կառավարութիւնը հայ թերթերուն վրայ ալ կը բանեցնէ իր խափանարար աշխեցութիւնը, օրինակի համար վերջնական փակումը «Արձագանգ» լրագրին, որ տարածուած հայ թերթ մը էր:

Բեթերպուրիկէն հեռագիր մը կը զեկուցանէ թէ, Պիալիսթոքի ստայաննէ գործաւորները վեց ամսէ ի վեր գործադուլ ըրեր են: Թշուառութիւնը աննկարագրելի՝ այդ 2000—2500 գործաւորներուն մէջ: Հեռագիրը կաւելցնէ թէ՛ մեծ հաւանականութիւն կայ գործադուլի միջոցը յալթանակով պսակուելու, եթէ դադարը չաբաթ մըն ալ տեսէ:

Պ. Ռալի, Նախկին Նախագահ Յունաստանի Նախարարական խորհուրդին, որ Պոլիս կը գլուխուէր, անցած ուրբաթ սէլամլըզի արարողութեան Իերկայգտնուել է: Սուլթանը անոր ներկայութիւնը իմանալով փափագ յայտնել է հետը տեսնուելու: Այս տեսակցութեան մէջ, Սուլթանը իր բարեկամական զգացումները յայտնել է Յունաստանի թագաւորին և թագուհիին, ցաւ յայտնելով միեւնոյն ատեն որ, թագուհին, իր յաճախակի ճանչորդութիւններուն մէջ, Վոսփօրէն անցած ատենը, ցամաք չելար:

Պ. Ռալի Օսմանիէ պատուանշան ստացել է:

Այսօրէն սկսիլով «ԱՇԽԱՐՀ» երեքշաբթի օրերը պիտի հրատարակուի: Առաջին 3 թիւերը ընդունող ու չի վերագարձնողը բաժանորդ կը համարու:

Отговорникъ Никола Д. Драгулевъ. Печ. „Взаимость“ Варна.